սրբության անունով։ Այդպես էլ Սպիտակավոր Աստվածածին անունը ծագած պիտի լինի մի պատկերից, որի քղամիդը կամ ծիրանին սպիտակ էր, ինչպես և «Ծիրանավոր», «Կարմրավոր» անունով յեկեղեցիները*։ Սպիտակավոր Աստվածածին անունով մի ուրիշ տաճար կառուցված է 1301 թվին Որբելյանների հարսը, Տարսայիճի և Մինախաթունի որդի Ջալալի ամուսին Գոնցա իշխանուհու կողմից. «զեկեղեցիս շինեցի անուամբ Սպիտակաւոր Ածածնին», ասված է արձանագրության մեջ**. այս յեկեղեցու արևմտյան դրան կամարակալ քարի վերա ևս քանդակված է մի Աստվածածին, բայց տարբեր մեր քանդակից, որ նշան կարող է լինել, թե նույնանուն Աստվածածնի տարբեր պատկերները կային։ Ամաղվի Բուրթելաշեն Աստվածածինը նույնպես դրան ճակատին և ներսը ունի Աստվածածնի քանդակներ, բայց թե ունե՞ր որ և է մականուն, հայտնի չէ***։ Այս փաստերը, որոնք ապացուցանում են, թե սրբությունների անունով շինվում և կոչվում էին յեկեղեցիներ և այդ սրբությունների քանդակները կամ պատկերները ցուցադրվում յեկեղեցու արտաքին պատերի վրա որ և է պատշաճ տեղում, որի մի յերևույթն էլ մեր քանդակն է։

Սպիտակավոր Աստվածածնի քանդակների յերրորդ խումբը «խնդրվածքի» կամ բարեխոսի քանդակն է (պատկ. 99, 100, 101). արվեստի պատմության մեջ «դեիսուս» կոչված, հունարեն δέησις—խնդիր, խնդրվածք բառից։ Այս խմբանկարի զանազան փոփոխակներն ու ձևակերպությունները կան վորմանկարչության, քանդակագործության, մանրանկարչության և մանր արվեստների այլ և այլ ճյուղերի մեջ. ամեն տեղ խմբանկարի կեդրոնն է փառավորյալ Հիսուս, աթոռի վրա նստած կամ կանգնած, աջով խաչակնքելիս, իսկ ձախով ավետարան բռնած, նրա աջ կողմից Մարիամ և ձախից Հովհաննես Կարապետ իբրև միջնորդ և բարեխոս։ Հազվագյուտ չեն սակայն վերջինների տեղ յերկու կամ ավելի առաքյալներ կամ այլ սրբեր նվիրատուների հետ։ Յոթերորդ դարու հայ արվեստի մեջ հիշել կարող ենք Մրենի արևմտյան դրան ճակատի քանդակը. մեջ տեղում Ամենակալը, աջից և ձախից մի մի առաքյալ և ապա Կամսարական իշխաններն ու յեպիսկոպոսը. կեդրոնական պատկերի գլխին յերկու հրեշտակներ, փառաբանության և բարեխոսության գաղափարները միացած։ Մանրանկարչության մեջ հնագույն օրինակն ունինք Ժ. դարից, աթոռի վրա բազմած Հիսուսի յերկու կողմից մի մի կանգնած առաքյալ*. նույն խմբանկարն ունինք Որբելյանների հարս Գոնցայի 1301 թվին շինած Սպիտակավոր Աստվածածնի պատի վրա**, իսկ յերկու հրեշտակների մեջ Բուրթելաշեն Աստվածածնի արևմտյան ճակատին, Ամաղու վանքում, 1339 թվին***։

Բյուզանդական արվեստի պատմության մեջ, անշուշտ, այս խմբանկարի առանձին պատկերների ծագումը հին է, մանավանդ Ամենակալինը, որ մոզայիկ և մանրանկարչական ճյուղերի մեջ կրկնված է հաճախ Զ. դարում. մեր մեջ Ոձունի տաճարի արևելյան պատին, որ ավելի ուշ չենք համարում քան Զ. դարի առաջին քառորդը. բայց բարեխոս Աստվածածնի պատկերների ծագումն էլ, գրեթե, նույնչափ հին պիտի լինի. համենայն դեպս Զ և Է. դարերից ունինք այդ յերևույթը հաստատող փաստեր մոզայիկ և մանրանկարչական արվեստների մեջ[1]։ Ուշադրության արժանի չէ այն հանգամանքը, որ Կոսմա Հնդկանավորդի մանրանկարներից մեկի մեջ «խնդրվածքի» յերեք ֆիգուրները իրար մոտ են առաջին անգամ, և որ կարևորն է, Մարիամ այնպիսի դիրքով, որ հատուկ է մեր խմբանկարին. իսկ հնագույն ձեռագրի (Վատիկանի № 699) օրինակը գիտականների կողմից ավելի ուշ չէ համարվում, քան Զ. դարը, որքան և տարբեր կարծիքի լինին բուն ձեռագրի նկատմամբ[2]։

Սակայն սա բացառիկ յերևույթ է արվեստի պատմության մեջ. խնդրվածքի խմբանկար ավելի վաղ քան Ժ—ԺԱ. դարը հայտնի չէ. Լիխաչյովը յուր մեծ աշխատության մեջ մի շարք կնիքներ և դրամներ է բերում Աստվածածնի խնդրվածքի տիպի պատկերներով, վորոնց հնագույնները Ժ—ԺԱ. (պատկ. 10. 11) և ԺԱ—ԺԲ. (8) դարերից այն կողմը չեն անցնում[3]. Նրա հետ համաձայն է և Կոնդակովը[4], որ նույն տիպի կնիքների և դրամների ծագումը կապված է ընդունում այսպես կոչված մակեդոնական, ավելի ճիշդ հայկական հարստության հետ. թեև նախնական օրինակը կարող է Ը—Թ. դարերում պաշտաման առարկա յեղած լինել, ծագումով ավելի հին, ասորական տիպով։

Կոնդակովի այս վերջին յենթադրությունը հաստատվում է, կարծես, հայ արվեստի ավյալներով. Սեբաստիայի վիլայեթի հարավային սահմաններում՝ Թանդալ գյուղաքաղաքի հայոց յեկեղեցին ուներ մի ավե-

---

* Աշտարակ քաղաքում յերկու յեկեղեցիներ կան Զ և Է. դարերի. առաջինը բազիլիկա չէ և ավերակ, կոչվում է «Ծիրանավոր», իսկ յերկրորդը գմբեթավոր, խաչաձև մատուռ. այժմ տարաբաղդաբար նորոգության պատճառով մասամբ փոխած հին ձևը, կոչվում է «Կարմրավոր»։ Մի յերրորդ յեկեղեցի, որ քանդել են և հնի տեղը հիմքը դրել, կիսատ թողնելով, կոչվում է «Ամենափրկիչ», որ հիշատակվում է 1478 թվին գրված մի ավետարանի հիշատակարանի մեջ (Արցախ. Բարխ. յեր. 344) և ապա ս. Մարինեյում պահված մի յերկրորդ ավետարանի հիշատակարանում 1716 թվին։

** Х. В. Том. II. 1913. յեր. 236։

*** Ալիշան. Սիսական. 199։ Матер. по Археол. Кавказа. XIII. Табл. XL.։ Լալայան. Վայոց Ձոր (լուսանկ. Ալբոմ)։

* Ձեռ. Էջմ. № 2374. 6ա։

** Х. В. 1913. յեր. 240։

*** Ալիշան. Սիսական 197։ Мат. по Археол. Кавказа, Уварова. XIII. XL. 189։

[1] Кондаков. Иконогр. БМ. Т. I. 356

[2] Diehl. 226. Krause 461/2.

[3] Лихачев. 56 և շար.։

[4] Иконогр. БМ. 296 և շար.։